

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 35

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ՆԻՍԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը, բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ագարակի բժշկական ամբուլատորիա», «Արուճի բժշկական ամբուլատորիա», Ասյա Մարկոսյանի անվան Կոշ բուժամբուլատորա, «Ուջանի բժշկական ամբուլատորիա», «Կարբիի բժշկական ամբուլատորիա», «Օշականի բժշկական ամբուլատորիա», «Ոսկեվազի բժշկական ամբուլատորա», «Փարպիի բժշկական ամբուլատորա», «Սասունիկի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու, միաձուլման արդյունքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի «Աշտարակի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի <<Աշտարակի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 166-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Տեղական վճարի արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ադոմյան/

9. Աշտարակ համայնքի Օշական, Փարպի, Արտաշավան, Լեռնարոտ և Ագարակ բնակավայրերում փողոցների, նրբանցքների և փակուղիների համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օրգով բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեհատ բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

14. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

15. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

16. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

17. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի բյուջեի կադարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի 2023 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի կատարողականը.

	Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե	Ընդամենը
Եկամտային մաս	3599500.3	1619788.5	5219288.8
Ծախսային մաս	2782884.9	3550065.5	6332950.4

Բարձրացված հարցերին Շանթ Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հարկային արտոնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի, <<Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն /հավելված 1/:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը և Կ. Առաքելյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ագարակի բժշկական ամբուլատորիա>>, <<Արուծի բժշկական ամբուլատորիա>>, Այյա Մարկոսյանի անվան Կոշ բուժամբուլատորա, <<Ուջանի բժշկական ամբուլատորիա>>, <<Կարբիի բժշկական ամբուլատորիա>>, <<Օշականի բժշկական ամբուլատորիա>>, <<Ոսկեվազի բժշկական ամբուլատորիա>>, <<Փարպիի բժշկական ամբուլատորիա>>, <<Սասունիկի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու, միաձուլման արդյունքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի <<Աշտարակի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի <<Աշտարակի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 81-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի, 64-րդ հոդվածի 1-ին մասով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի, 14-րդ հոդվածի 2-րդ մասի «<ը>> կետով և 24-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ագարակի բժշկական ամբուլատորիա», «Արուծի բժշկական ամբուլատորիա», Այա Մարկոսյանի անվան Կոշ բուժամբուլատորա, «Ուջանի բժշկական ամբուլատորիա», «Կարբիի բժշկական ամբուլատորիա», «Օշականի բժշկական ամբուլատորիա», «Ոսկեվազի բժշկական ամբուլատորա», «Փարպիի բժշկական ամբուլատորա», «Սասունիկի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների համապատասխան դրույթները, միաձուլման ձևով վերակազմակերպել նշված ՀՈԱԿ-ները՝ ստեղծելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի «Աշտարակի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց որոշման նախագիծը և ընդունման անհրաժեշտությունը, բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18-ԿՈՐՄ, 1-ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 5 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 166-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 166-Ա որոշման հավելված 18-ը և հավելված 34-ը շարադրել նոր խմբագրությամբ:

Բարձրացված հարցերին Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34, 37 հոդվածների պահանջներով, հաստատել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի: Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 20.09.2022թ. N 132-Ա որոշումը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Տեղական վճարի արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներին տրամադրել Աշտարակ համայնքի ենթակայությամբ գործող արտադպրոցական և մշակութային հաստատությունների խմբակների վարձավճարի արտոնություն՝ 2024 թվականի հունվար - դեկտեմբեր ամիսների համար:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Հայաստանի Տարածքային

Զարգացման Հիմնադրամի /ՀՏՁՀ/ կողմից իրականացված Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման /ՄՆՏՁ/ ԼՖ բաղադրիչ 2 ծրագրի շրջանակում Աշտարակ համայնքի կոմունալ ծառայությունների բարելավման նպատակով ձեռք բերված 3 հատ աղբատար մեքենաները՝ MAZ մակնիշի 050 CX 61 պետհամարանիշի (VIN X5H449175P0000015), MAZ մակնիշի 051 CX 61 պետհամարանիշի (VIN X5H449175P0000012), MAZ մակնիշի 052 CX 61 պետհամարանիշի (VIN X5H449175P0000013), անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկին:

Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող ՈւԱԶ 236324-105 (VIN-XTT236324R1002095) մակնիշի բեռնամարդատար մեքենան անհատույց օգտագործման իրավունքով Աշտարակ համայնքի <<Բարեկարգում>> ՀՈԱԿ-ին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող ՈւԱԶ 236324-105 (VIN-XTT236324R1007399) մակնիշի բեռնամարդատար մեքենան անհատույց օգտագործման իրավունքով Աշտարակ համայնքի <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Աշտարակ համայնքի Օշական, Փարպի, Արտաշավան, Լեռնարոտ և Ագարակ բնակավայրերում փողոցների, նրբանցքների և փակուղիների համարակալման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով,

1. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրում նոր փողոցին տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Դպրոցական 3-րդ փողոց:

2. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Դպրոցական 3-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 7 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Դպրոցական 3-րդ փողոց, 7-րդ նրբանցք:

3. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Դպրոցական 3-րդ փողոց, 7-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 4 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Դպրոցական 3-րդ փողոց, 7-րդ նրբանցք, 4-րդ փակուղի:

4. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Դպրոցական 3-րդ փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Դպրոցական 3-րդ փողոց, 2-րդ փակուղի:

5. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Դպրոցական 3-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Դպրոցական 3-րդ փողոց, 1-ին նրբանցք:

6. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Դպրոցական 3-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Դպրոցական 3-րդ փողոց, 3-րդ նրբանցք:

7. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Դպրոցական 3-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 5 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Դպրոցական 3-րդ փողոց, 5-րդ նրբանցք:

8. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Դպրոցական 3-րդ փողոց, 7-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Դպրոցական 3-րդ փողոց, 7-րդ նրբանցք, 2-րդ փակուղի:

9. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Վ. Ամատունու փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Վ.Ամատունու փողոց, 3-րդ նրբանցք:

10. Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի Դ. Տեր-Մկրտչյան 3-րդ փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Փարպի բնակավայր, Դ. Տեր-Մկրտչյան 3-րդ փողոց, 1-ին փակուղի:

11. Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի 5-րդ փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Արտաշավան բնակավայր, 5-րդ փողոց, 1-ին փակուղի:

12. Աշտարակ համայնքի Լեռնարոտ բնակավայրի 5-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Լեռնարոտ բնակավայր, 5-րդ փողոց, 2-րդ նրբանցք:

13. Աշտարակ համայնքի Ագարակ բնակավայրում նոր փողոցին տալ 30 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Ագարակ բնակավայր, 30-րդ փողոց:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 10 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օրգով բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 26.01.2024թ. N 2/փ-33 դրական եզրակացությունը՝ Աշտարակ համայնքի Օրգով բնակավայրի 02-114-0118-0001 ծածկագրից 1,42206հա և 02-114-0118-0002 ծածկագրից 1,60942հա հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Օրգով բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 02-114-0118-0001 ծածկագրից 1,42206հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների հողեր

նպատակային նշանակության՝ պատմական և մշակութային հողեր գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության վարելահողի և քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-114-0118-0002 ծածկագրից 1,60942հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների հողեր նպատակային նշանակության՝ պատմական և մշակութային հողերի փոփոխությունը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

U. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն - 11 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեհատ բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 14.11.2017թ. N 139 դրական եզրակացությունը՝ Աշտարակ համայնքի Ոսկեհատ բնակավայրի 02-086-0111-0050 ծածկագրից 6,78հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-086-0111-0050 ծածկագրից 6,78հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի նպատակային նշանակության՝ ընդերքօգտագործման գործառնական նշանակության փոփոխությունը:

Հարցապնդումներով և ելույթներով հանդես եկան ավագանու անդամները և առաջարկեցին, հաշվի առնելով նաև Աշտարակ համայնքի Ոսկեհատ բնակավայրի բնակչության մեծամասնության կարծիքը, դեմ քվեարկել որոշման նախագծին:

20 - ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Գինիկ Աղաբաբյանի 11.01.2024թ. N 284 դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայր 9-րդ փողոց, 4-րդ փակուղի, N 6/1 հասցեում գտնվող, 02-068-0049-0003 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 37,28քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից ընդլայնվող 02-068-0049-0004 և 02-068-0049-0023 ծածկագրերով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերի սեփականատեր Գինիկ Արթուրի Աղաբաբյանին:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Լևոն Փանոսյանի 25.01.2024թ. N 812՝ ջերմոցային տնտեսության կառուցման հայտը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի 02-068-0410-0059 ծածկագրով, Լևոն Վազգենի Փանոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,4466հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական

նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 14 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

1. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետին համապատասխան՝ համաձայնություն տալ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելուն:

Համայնքի ղեկավարին՝ նույն կարգի 10-րդ կետին համապատասխան՝ կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետին:

2. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ արոտները և խոտհարքները (բնական կերհանդակներ), վարձակալության տրամադրելիս վարձավճարները սահմանել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 898-Ն որոշմամբ հաստատված կադաստրային գները՝ համաձայն հավելվածի, նրանց նկատմամբ կիրառելով 2 գործակից:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը և խոտհարքները կարճաժամկետ վարձակալության տրամադրելիս պայմանագրերը կնքել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմանը համապատասխան՝ մարզպետի դրական եզրակացության

առկայության դեպքում:

19 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 15 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 16 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ՝ Աշտարակ համայնքի ավագանու 29.01.2013թ. N 9-Ն որոշմամբ հաստատված Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու, համայնքային

սեփականություն հանդիսացող, Աշտարակ քաղաքում գտնվող 02-001-0095-0001 ծածկագրով «Կոմիտասի» անվան զբոսայգու զբաղեցրած բնակավայրերի նշանակության, ընդհանուր օգտագործման 3,22հա մակերեսով հողամասից 0,9104հա հողամասը չմասնավորեցվողից մասնավորեցվող դարձնելու, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման փոխելու, որպես բնակավայրերի նշանակության՝ հասարակական կառուցապատման հողամաս, նախապես հաստատված ծրագրային և քաղաքաշինական կառուցապատման փաստաթղթերին համապատասխան սահմանված մեկնարկային գնով աճուրդ-վաճառքով օտարելու, առաջացած գումարն ամբողջությամբ զբոսայգու կառուցապատմանն ուղղելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Միաժամանակ, դիմել «Արագածոտնի մարզպետարան՝ միջնորդելու «Կառավարությանը՝ հաստատված առաջարկությանը համաձայնություն տալու նպատակով:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 17 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի մարտի 15-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2024 թվականի փետրվարի 15-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

- ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____
- ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____
- ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____
- ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____
- ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____
- ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____
- ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ _____
- ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____
- ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____
- ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
- ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ _____
- ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____
- ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____
- ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____
- ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ